ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

19 մարտի 2020 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/2
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 47 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետի մամուլի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, իրավաբանական, եկամուտների հաշվառման և գանձման, կազմակերպական, տրանսպորտի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի, ճարտարապետության և քաղաքաշինության, արտաքին ձևավորման և գովազդի, մշակույթի և տուրիզմի, բնապահպանության, շինարարության և բարեկարգման, սոցիալական ապահովության վարչությունների պետերը:

Նախքան օրակարգին անդրադառնալը, Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը տեղեկացրեց, որ համաձայն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 11-ի արձանագրության՝ Երևանի ավագանու ԻՄ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամ՝ Հենրիկ Հարթենյանի մանդատը տրվել է ԻՄ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Պավել Սարգսյանին:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը տեղեկացրեց, որ ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամ Արուսյակ Հարությունյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի պաշտոնից հրաժարվելու մասին: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 24-ի արձանագրության համաձայն՝ ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ Հռիփսիմե Հունանյանին:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը և առաջարկեց Երևանի ավագանու 2020 թվականի մարտի 19-ի նիստի օրակարգի նախագծից հանել 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ հարցերը՝ համապատասխանաբար.

12.Լեոնիդ Ենգիբարյանի անվան պուրակ անվանակոչելու մասին:

13.Մահաթմա Գանդիի արձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

14.Հայաստանի նկարիչների միավորում հասարակական կազմակերպությանը գույքահարկի զծով արտոնություն սահմանելու մասին:

15. Հայաստանի կույրերի միավորում հաշմանդամների հասարակական կազմակերպությանը գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

16.Հայաստանի խուլերի միավորում հասարակական կազմակերպությանը գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

17.Հայաստանի ժուռնալիստների միություն հասարակական կազմակերպությանը գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

18.Հայաստանում գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղին գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

19.Սիմոնյան կրթական հիմնադրամին հողի հարկի արտոնություն սահմանելու մասին:

20.Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

Ներկայացված առաջարկությունն ընդունվեց:

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 100-րդ կետով և հաշվի առնելով ԼՈՒՅՍ խմբակցության կողմից ներկայացված առաջարկությունը, Երևանի ավագանու 19.03.2020թ. նիստի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմում՝ որպես հանձնաժողովի անդամ նշանակվեց ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյանը:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու 2020 թվականի մարտի 19-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին:
3. Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:
4. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
5. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N36-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:
6. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
7. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
8. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
9. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
10. «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
11. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝46, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Ընդունել ի գիտություն Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝41, դեմ՝4, ձեռնպահ՝1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

2.Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

3.Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

4. Արմեն Ներսիսյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

5. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

6.Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը, քաղաքապետի առաջին տեղակալ Հր. Սարգսյանը, քաղաքապետի տեղակալներ՝ Հ. Սարգսյանը և Տ. Վիրաբյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

2. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

3. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5.Հրաչյա Սարգսյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Արտահերթ ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դ. Խաժակյանը և ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Մ. Մանրիկյանը:

Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Մ. Մանրիկյանի ելույթի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հր. Սարգսյանը:

«Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն NN 1-5 հատվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝40, դեմ՝6, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 14.20-ին:

4. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Մարկոս Հարությունյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
3. Արմեն Ներսիսյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
4. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը, քաղաքապետի առաջին տեղակալ Հր. Սարգսյանը, քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ա. Մեսչյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լուսինե Գևորգյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1.Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի մասին» N186-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) եկամուտների գումարը ավելացնել 1,700,652.8 հազար դրամով.

2) ծախսերի գումարն ավելացնել 9,248,098.4 հազար դրամով.

3) դեֆիցիտի (պակասուրդի) գումարը ավելացնել 7,547,445.6 հազար դրամով.

4) 2-րդ կետում «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ) ծրագրի իրականացման համար հատկացնել 9,228,174.6 հազար դրամ» բառերը փոխարինել «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագիր (պատվիրակված լիազորություններ) իրականացման համար հատկացնել 9,233,794.8 հազար դրամ» բառերով.

5) NN1-7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-7 հավելվածների.

6) N6 և N7 հավելվածներում «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագիր (պատվիրակված լիազորություններ)» բառերը փոխարինել «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ)» բառերով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 36 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝36, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

5. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N36-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N36-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» N36-Ն որոշման հավելվածում (այսուհետև՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) Հավելվածի 2-րդ կետում «ինչպես նաև կանաչապատ կամ բուսածածկ այլ տարածքները)» բառերից հետո լրացնել «կամ հանդիսանում են հողաշերտ, որը նախատեսված է կանաչ տնկարկների կամ բուսածածկի համար» բառերով:

2) Հավելվածի 4-րդ կետում «քառամյա» բառը փոխարինել «հնգամյա» բառով:

3) Հավելվածի 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«10. Կանաչ տարածքների օգտագործումը կամ դրանցում որևէ գործունեության իրականացումն արգելվում է, եթե այն չի ապահովում կանաչ տարածքների բնականոն կենսագործունեությունը:»:

4) Հավելվածի 4-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. Ծառերի, թփերի էտում, հատում, բուսաշերտի տեղահանում և հողաշերտի պինդ ծածկույթով փոխարինում

12. Ծառերի, թփերի էտումը, հատումը, բուսաշերտի տեղահանումը կամ հողաշերտի պինդ ծածկույթով փոխարինումը թույլատրվում է հետևյալ դեպքերում՝

1) Երևանի զարգացման միամյա, հնգամյա, երկարաժամկետ կամ հատուկ ծրագրերին համապատասխան մշակված, քաղաքաշինական փաստաթղթերով նախատեսված նախագծի իրականացման և օրենսդրությամբ սահմանված կարգով բնապահպանական փորձաքննության դրական եզրակացության առկայության.

2) սանիտարական էտումների կամ հատումների իրականացման կամ կանաչ գոտու վերաձևավորման կամ փոփոխության ենթարկման.

3) սանիտարական և հակահամաճարակային հսկողություն իրականացնող մարմինների եզրակացության հիման վրա՝ բնակելի և ոչ բնակելի նորմատիվային լուսավորության ռեժիմի վերականգնման.

4) վթարային արտակարգ իրավիճակների վերացման, այդ թվում՝ կապիտալ շինությունների և ստորգետնյա կոմունիկացիաների վերանորոգման (հետագա վերականգնման պայմանով).

5) չորացած կամ տապալման ենթակա ծառերի կամ թփերի հեռացման:

13. Ծառերի կամ թփերի էտումը կամ հատումը, ինչպես նաև բուսաշերտի տեղահանումը կամ հողաշերտի պինդ ծածկույթով փոխարինումն իրականացվում է լիազորված մարմնի կողմից տրված թույլտվության առկայության դեպքում:»:

5) Հավելվածի 18-րդ կետի 3)-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3) ավտոտրանսպորտային կամ այլ տեխնիկայի երթևեկությունը կամ կանգառը»:

6) Հավելվածի 18-րդ կետի 4)-րդ ենթակետում «և» բառը փոխարինել «կամ» բառով

7) Հավելվածի 18-րդ կետի 6)-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«6) թունավոր կամ վնասակար նյութերի օգտագործում, ինչպես նաև տարածքի աղտոտում կամ այլ գործողություններ, որոնք կարող են հանգեցնել կանաչ տարածքների վնասմանը, ոչնչացմանը կամ հողի աղտոտմանը.»:

8) Հավելվածի 18-րդ կետի 8)-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած։

9) Հավելվածի 9-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ՝

«9. Վնասի հատուցում

28. Կանաչ տարածքներին հասցված վնասը ենթակա է հատուցման։ Հատուցման չափը որոշվում է՝ ելնելով կանաչ տարածքի փոխհատուցվող արժեքից։

29. Վնասի հատուցման նպատակով գնահատումը կատարվում է՝

1) կանաչ տարածքի անօրինական վնասման կամ ոչնչացման դեպքում

2) ծառերի կամ թփերի էտման կամ հատման դեպքում, եթե էտումը կամ հատումը կատարվել է առանց լիազորված մարմնի թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների խախտումով

3) բուսաշերտի տեղափոխման դեպքում, եթե տեղափոխումը կատարվել է առանց լիազորված մարմնի թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների խախտումով

4) հողաշերտի պինդ ծածկույթով փոխարինման դեպքում, եթե փոխարինումը կատարվել է առանց լիազորված մարմնի թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների խախտումով

5) հողի աղտոտման դեպքում։

30. Փոխհատուցումը կատարվում է գումարային կամ կանաչ տարածքը վերականգնելու ձևով:

31.Վնասի փոխհատուցումը կանաչ տարածքը վերականգնելու ձևով իրականացվում է վնաս հասցրած սուբյեկտի և լիազորված մարմնի միջև կանաչապատման աշխատանքների իրականացման վերաբերյալ պայմանագրի կնքման հիման վրա՝ սույն կանոնների 5-րդ գլխով սահմանված կարգով։

32.Վնասը համարվում է ամբողջությամբ հատուցված՝ լիազորված մարմնի կողմից կատարված աշխատանքների ընդունումից կամ գումարը Երևանի բյուջե մուտքագրվելուց հետո։»:

10) Հավելվածի երկրորդ 9-րդ («Չհատուցվող վնաս») գլուխը ճանաչել ուժը կորցրած:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝37, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

6. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագրի վերաբերյալ» N178-Ն որոշմամբ հաստատված հավելվածի VI-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 3-11-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 36 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝36, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

7. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյան տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.31/1 հասցեում «ԼԱՎ-ՍԱՐ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 1.616947 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 36 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝36, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

8. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյան տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Զ.Սարկավագի փողոց հ.128 հասցեում գտնվող 13965.0 քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2.Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝37, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

9. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյան տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Մասիսի փողոց h.5 հասցեում գտնվող 13320.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝37, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

10. **ԼՍԵՑԻՆ** - «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Էդգար Գալստյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Է. Գալստյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ ««ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» ՍՊԸ-ին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանա-տեղ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 38 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝28, դեմ՝1, ձեռնպահ՝9

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

11. **ԼՍԵՑԻՆ** - Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Էդգար Գալստյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Է. Գալստյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ 2020 թվականի ընթացքում շարունակելու հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը։

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի տեղական վճարների դրույքաչափերը հաստատելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 39 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝31, դեմ՝0, ձեռնպահ՝8

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Էդուարդ Ավետիսյանը և նշեց, որ հաշվի առնելով ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրությունը և Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող հրատապ գործառույթները՝ առաջարկվում է չեղարկել Երևանի ավագանու 19.03.2020թ. նիստի ավարտից հետո ավագանու բանավոր հարց ու պատասխանի անցկացումը: Առաջարկը ընդունվեց միաձայն:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2020 թվականի ապրիլի 28-ին, ժամը 11.00-ին:

Առաջարկը ընդունվեց միաձայն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝ Ն. Ղուկասյան